

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին».

Հանդէս Ամսօրեայ ամսագրում Բ. Խալաթեան սկսել է հրատարակել այս վերնագրով թարգմանական յօդուածներ. նախընթաց մի քանի համարներում Հայաստանի և Կիլիկիոյ նահանգների ու գաւառների ցուցակն ըստ Խնճիճեանի և Ալիշանի արտատպելուց յետոյ, որի նպատակն ինձ համար հասկանալի չեղաւ, Ապրիլի համարում, եր. 122, հհ. անցնում է բուն նիւթին, սկսելով թարգմանել Բելադորի պատմչի «Գիրք նուաճմանց աշխարհաց» (كتاب فتوح البلدان) յայտնի պատմական երկի մի գլուխը, որ կըրում է «Հայաստանի նուաճումները» վերնագիրը: Քանի որ մեր պատմութեամբ և մատենագրութեամբ հետաքրքւրւողները յիշեալ թարգմանութիւնից, իբրև նոր աղբիւրից, պէտք է օգտուեն, ուստի կարևոր եմ համարում մի քանի նկատողութիւններ անել: Պ. Խալաթեանի թարգմանութեամբ Բելադորու պատմութեան այդ կարևոր հատուածը միանգամայն թերի ու յեղաշրջուած պէտք է հայ ընթերցողներին ներկայացուի:

Թուելով այն անձանց անունները, որոնք բերանացի աւանդութիւններ են հաղորդել իրեն, Բելադորին ասում է (եր. 193, տող 2 ներք), «Նոցա աւանդածներից մի մասը մերժեցի, միւսներին առաւելութիւն տալով» (de Goeje թարգմանում է, Bel. Gloss. եր. 43, մի մասը միւսով լրացրի), այս նախադասութիւնը կարևոր է մատենագրական տեսակէտից, ցոյց է տալիս պատմագրի քննական ոգին, որ և պարզ երևում է պատմութեան շարունակութեան մէջ. նա արդարև լսած աւանդութիւններին անպայման հաւատ չի ընծայում, այլ քննադատօրէն է վերաբերում. Բ. Խալաթեան յիշեալ նախադասութիւնը թարգմանել է.

նոցա պատմածը եւ միմեանց կցեցի եւ մի առ մի կրկնեցի», որով Բելադորին ներկայանում է մեզ մի գիւրա-հաւան, ամէն մի լսածին առանց այլևայլութեան հաւատացող ու բառացի կրկնող մարդ։ Ըստ Բելադորու (եր. 194, տ. 6, վեր.) Հայաստանի յունական մասը կառավարում էր Արմենիակոսի սէրը (صاحب ارمينيا). Արմենիակոս բառը նախադասութեան մէջ նախընթաց բառին յատկացուցիչ է և կարող է միայն մի տեղի—երկրի, նահանգի և ըն.—անուն նշանակել։ Ըստ Իբն Խորդադբէհի¹, որի ցուցումները Փոքր Ասիայի աշխարհագրական բաժանումների մասին քաղել է Գեղեցիկ իւր Über die Byzantinische Themenverfassung աշխատութեան մէջ, որ թարգմանաբար հրատարակուում էր Վեննայի Հանգիստում, յունաց 12 Պատրիկներից 6-ը կառավարում էին կայսրութեան նահանգները, դոցանից մէկն էր Արմենիակի պատրիկը (Ibn Chord. հր. de Goeje, եր. 109). Իբն Խորդադբէհ որոշում է այս նահանգի աշխարհագրական գիրքը (եր. 108) ասելով, որ սահմանակից է Անգորային։ Ըստ Կոդամայի² Արմենիակ մի վարչական շրջան էր, 'ամալ (أمل), Հայաստանի հիւսիս—արեւմտեան կողմը (Qod. եր. 255, հր. de Goeje)։ Աւելի ճիշտ որոշում է այս նահանգի աշխարհագրական գիրքը Իբն ալ Աթիր³ իւր Լիակատար պատմութեան մէջ (Chronik, ed. Tornberg, III, 65). Իւր ժամանակ Արմենիակոս դառնում էր Ղլիճ Արսլանի որդոց իշխանութեան տակ և ամփոփում էր Մալաթիա, Սիվաս, Կեսարիա, Կոնիա և սահմանակից տեղերը, մինչև Կոստանդնուպոլսի նեղուցը (خليج القسطنطينية)։ Այս կառուր ցուցումները Բ. Խալաթեանին յայտնի չեն եղել, ուստի և թարգմանել է «Արմենիակոս իշխանն», փոխա-

1. † 844-ի և 848-ի միջոցին. տ. Բրոկհեյմանն, Gesch. der arab. Lit, I, 225.

2. † 922, Բրոկհեյմ. նոյնը, 228.

3. † 1234, Բրոկհեյմ. նոյնը, եր. 345.

նակ «Արմենիականի իսխանն», թէ և նախադասութիւնն ինքն ըստ ինքեան իրուանք չի տալիս այդպէս թարգմանելու¹։ Հայաստանի (Վրաստան և Աղուանք միասին) նախկին վիճակը ներկայացնելիս Բելադորին ասում է, (եր. 194, տ. 7, վ.) որ Խաղարները արչաւում և ասպատակում էին և երբեմն հասնում էին մինչև Գայնավար։ Թարգմանութեան մէջ կարգում ենք Խաղարներ կարչաւէին երկրի խորհերը և երբեմն ևլն. ընդդժաժ խօսքերը բնագրում չկան։

Պերոգի օրգի Կաւատի մասին Բելադորի պատմում է, որ շինեց Շիրուան երկրի և Ալանաց դրան մէջ տեղը թրժաժ աղիւսից պարիսպ, իսկ պարսպի հանդէպ (կամ երկարութեամբ) 360 քաղաք. [այդ քաղաքների տեղը օրոշելու համար պատմչի ցուցումը կարևոր է, և հէնց այս կարևոր ցուցումը թարգմանութեան մէջ չկայ. ըստ Խալաթեանի Կաւատ շինում է ի միջի այլոց «թըրժաժ կաւից պարիսպ, իսկ դրանից յետոյ 360 քաղաք»։ Ապա գալիս են թարգմանութեան մէջ հետևեալ տողերը. «այս տեղերում նա բնակեցրեց ժողովուրդ, որ կուէց Սիսական ևլն»... Պարզ է, որ նա գերանունն այստեղ վերաբերում է Կաւատին, ուրեմն այս և յետագայ գործերը, — Շաքիի, Գամբեճանի և Գողանիոյ գոտերի շինութիւնը Առանում, Սուղդաբելի² շինութիւնը Վրաստանում, Պերոգիւաւտի, Ղազիկէ, Բարիքա գոտերի, Ալանաց դրան, Սամցխէի, Գարգման և Շամշուլդէ բերդերի շինութիւնը, — այս ամէնը վերագրում է թարգմանիչը Կաւատին, մինչդեռ ըստ Բելադորու այս բոլոր գործերը կատարողն է Կաւատի օրգին Խոսրով Անուշըրուան։ Շփոթութիւնն առաջ է եկել նրանից, որ թարգմանիչը բնագրից երեք տող (եր. 194, տ. 3—5 ներք.) մէջ է

1. Մասնաւոր խօսակցութեան մէջ իմ նկատողութեանը պ. Խալաթեան պատասխանել է, թէ ինքը այդ սխալը յետոյ է հասկացել։

2. Սուղդաբելի Խոսրով Անուշըրուանի ձեռքով շինուելու մասին տես նաև Tabari III, 1416. Ibn al Athtir VII, 45.

տուելի. այս երեք տողերի բառացի թարգմանութիւնն է. «ապա թագաւորեց Կաւատից յետոյ նրա որդին Անուշ-ըռուան Խոսրով՝ որդի Կաւատայ և շինեց Շաքիւրան քաղաքը և Մասկատ քաղաքը, ապա շինեց Բաբ-էլ-Սքուաբ (Դրանց դուռն) քաղաքը. իսկ գրուեց Կոչուելու պատ-ճառն այն է, որ նա շինուած է լեռների միջի մի անցքի վրայ». սրան հետեւում է բնագրի մէջ այն, ինչ որ թարգ-մանիչն է պատմում:

Դուգանիոյ (Ծովգէլց ?) դրանց շինութիւնն յիշելով, Բելադորին (եր. 194, տ. 1 ն.) մի շատ կարեւոր տեղե-կութիւն է հաղորդում այդ ժողովրդի ցեղագրութեան հա-մար. այդ նախադասութիւնն է. «սորա (դուգանացիք) մի համայնք են (آله), որ ասում են, թէ իրանք Խուզայմայի որդի Դուգանի ցեղից են». թարգմանութեան մէջ կար-դում ենք. «և գրուեց Դուգանիոյ, բայց տեղի բնակիչք կը պնդեն, թէ շինել է Դուգան Բ. Ասադ, Բ. Խուզայ-մա» (?): Արաբական գրութեան անձանօթ մէկին այս շփոթութիւնը միայնգամայն անհասկանալի կը լինի. խըն-դիրն այն է, որ ցեղ և շինեց բառերը արաբերէնում գրւում են միատեսակ, بنى, սակայն կարգաւցւում են, նայելով կապակցութեանը, բա'նի (ցեղ) և բա'նա (շինեց). ամբողջ մեղքը ծանրանում է հրատարակչի վրայ, որ ձայ-նաւոր նշանները չէ գրել. Բ. Խալաթեան կարգացել է երկրորդ ձևով, և ցեղը դառել է թարգմանութեան մէջ շինեց, թէպէտև այդ բառից առաջ բացառական من (մին) նախադրութիւնը կայ, որին գոյական պիտի հետևի: Ինչ-պէս արգէն յիշուեցաւ, բնագրի որոշ, ճիշտ արտայայ-տութիւնները թարգմանութեան մէջ չեն պահպանուած, ուստի և պատմական և աշխարհագրական կարեւոր ցուցու-ներն ստացուել են խիստ անորոշ: Բելադորի ասում է, որ Խոսրով շինեց Դուրդուքիյա, որ ասանելիու դուռ է. Խալաթեան թարգմանում է. «շինեց (Կաւատ) Դուրդու-քիյա (քաղաքը), որ ունէր 12 դուռ», այս նախադասու-թիւնն արաբերէն պիտի լինէր ولها اثنا عشر بابا, իսկ բնա-գիրն է وهي اثنا عشر بابا (և սա 12 դուռ է): Յետագայ

նախադասութիւնը կասկած չի թողնում, որ այստեղ խօսքը քաղաքի դռների մասին չէ. Բելադ. խօսքերն են. «այդ դռներից իւրաքանչիւրը մի քարաշէն դղեակ է»։ Ըստ Բելադորու Խօսքով դարձրեց Սուղբաբիլ քաղաքը Վրաստանում թշնամեաց դէմ գօրանց, այսինքն այնպիսի քաղաք կամ աւան, որտեղ բերդապահ կամ սահմանապահ զօրք է նստում. ըստ Խալաթեանի (Կաւատ) դարձրեց այն «թշնամեաց դէմ դիտանց»։ Ըստ Բելադորու (եբ. 195. տ. 3, վ.), «Վրաց երկրի այն մասում, որ սահմանակից է Յունաստանին, շինեց (Խօսքով) մի դղեակ, որ կոչւում է Դուռն Պերողկաւատ, մի դղեակ, որ կոչւում է Դուռն Լազիկա, և մի դղեակ, որ կոչւում է Դուռն Բարիկա (կամ Բարկայ?)»։ ըստ Խալաթեանի «Յունաց սահմանադիւսիւրայ շինեց (Կաւատ) դուռն Պերողկաւատ, Դ(ուռն) Լազիբայ, և Դ. Բարբայ ամրոցները»։ Բելադորուն յայտնի է եղել, որ յոյն—արաբական (դրանից առաջ յոյն—պարսկական) սահմանը ձգւում էր Միջերկրական ծովի ափից մինչև Կովկաս լեռները, ուստի և ընթերցողին անորոշութեան մէջ չթողնելու համար որոշ ցոյց է տալիս յիշեալ շինութեանց աշխարհագրական դիրքը, «Վրաց երկրի այն մասում, որ մօտ է Յունաստանին», այ. Խալաթեան այս ճիշտ որոշումն արդեօք կարեւոր չէ համարել, թէ յոյն—արաբական և յոյն—վրացական սահման նոյնն է կարծել։

Մենք գրեթէ ամբողջը նորից պիտի թարգմանէինք, եթէ կանգ առնէինք ամէն մի անճշտութեան վրայ. մեր նպատակն է սակայն բնագրի և թարգմանութեան այն տարբերութիւնները ցոյց տալ, որոնք միանգամայն յեղաշրջում են Բելադորու պատմութեան այդ, մեզ համար կարևոր, հատուածի միտքը։ Բելադորի պատմում է (եբ. 196, 7 ն.), թէ Խօսքով Անուշըռուան Բաբ—էլ—Աբուարի պարսպի մուտքի վրայ 100 հոգի պահապան կարգեց, մինչդեռ առաջ նոյն տեղի պահպանութեան համար հարկաւոր էր յիսուն հազար զինուոր. Խալաթեան թարգմանում է, ... «100 մարդ հեծելազօր դրեց մուտքը պաշտպանելու հա-

մար, ապա այդտեղ կարիք կար 5000 (հինգ հազար) զօրք պահելը: Բնական է, որ պարսպի շինութիւնից առաջ սահմանի պահպանութիւնն աւելի դժուար էր, ուստի և պարսիկներն ստիպուած էին 50000 (և ոչ 5000) զինուոր պահել այնտեղ, իսկ 100 զինուոր բաւական էր պարսպի շինութիւնից յետոյ. թարգմանիչն ընդունել է بعد ان (նրանից յետոյ, երբ—առաջ) իբրեւ بعد (յետոյ):

Ըստ բնագրի (եր. 196, 5 ն.) Խոսրով Անուշըռուան թողնում է Կովկաս լեռների իշխաններին իրանց իշխանութեան մէջ շահի տիտղոսով. դրանցից էին Ֆիլանի իշխանը, — Ֆիլանշահ, Մասկաթի իշխանը, որի իշխանութիւնը Բելադորու ժամանակ վերացել էր, Լիրանի իշխանը — Լիրանշահ, թարգմանութեան մէջ շփոթուել են երկրների անունները իշխանների անունների հետ և ստացուել է «ևս Ֆիլանին, որ էր Ֆիլանշահ... Մասկատին, որի տէրութիւնը թուլացած էր (?)... Իրանին, որ կը կոչուէր Իրանշահ, Շարվանին, որ կը կոչուէր Շարվանշահ. նոյն երես (Հանդ. ամս. Յունիս, 177.) ծան. 5. Խալաթեան հետեւելով Մարքարտին (Eransahr, 119) ուղղում է ایران — ایران. այս սրբագրութիւնը մեր կարծիքով անտեղի է, քանի որ այստեղ խօսքը Կովկասեան լեռներում գտնուած մի նահանգի մասին է. հաւանական չէ, որ երկու տեղում ևս (ایران, لیرانشاه) ձեռագրի աղաւաղումով բացատրուին, մանաւանդ որ արտագրողների համար Իրան բառը շատ աւելի ծանօթ և սովորական էր, քան Լիրան, ուրեմն և հակառակ շփոթութիւնը ایران փոխանակ ایران ի աւելի հաւանական էր:

Ըստ բնագրի (եր. 197, 5 ն.) Յունաց երկիրը վարչականապէս բաժանուած էր զանազան մասերի, որոնք կառավարւում էին առանձին իշխաններով. Արմենիակոսին իշխում էր նրանցից մեկը, որի մանից յետոյ երկրի վրայ իշխեց նրա կինը, որ կոչւում էր Գալի. պարզ է, որ այս նախադասութեան մէջ Արմենիակոս երկրի անուն է և ոչ իշխանի, մինչդեռ թարգմանութեան մէջ կարգում ենք. «նրանցից (իշխաններից ի հարկէ) մեկը, Արմենիաքուս իրան

Թագաւոր հրատարակեց (?). նոյն սխալը կրկնուում է նաև մի ուրիշ նախագաւառութեան (եր. 197, 5 ն.) Թարգմանութեան մէջ: Բելադորի պատմում է (եր. 197, 8 ն.) թէ Հաբիր իբն Մաւլամա արշաւեց Հայաստանի վրայ 6000, ըստ ոմանց 8000 հոգով Ասորիքի և Միջագետքի զօրքերից. Խալաթեան Թարգմանում է. «Հաբիր արշաւեց 16000, ըստ այլոց 18000 զօրքով Ասորիքի և Միջագետքի բնակիչներին»: Թուերի այս շփոթութիւնը պատահական, կամ տպագրական սխալի արդիւնք կը համարէինք, եթէ նոյնն ուրիշ տեղում ևս կրկնուած չլինէր. ըստ բնագրի (եր. 197, 1 ն.) Մոավիյա ուղարկում է Հաբիրի մօտ 2000 մարդ, ըստ Խալաթ. Թարգմանութեան՝ 1000. Սալման դնում է Հաբիրի մօտ 6000 մարդով Քուֆայի զօրքերից (եր. 198, 4 վ.), ըստ Խալաթեանի՝ 16000 բաբելական (?) զօրքով. ըստ բն. (197, 5,) Հաբիր մնում է Գալիլալայում իւրայիններով միասին մի քանի ամիս, ըստ Թարգ. մի ամիս. ըստ բն. (198, 6 ն.) Օսման պատուիրում է Վալիդին՝ ուղարկել Մոավիյային օգնութեան (յոյների դէմ) 8000 մարդ, ըստ Թարգ.՝ 18000. Նկատելու է նաև, որ Խալաթեան اهل բառը Թարգմանում է բոլոր գէպքերում բնակիչ, ժողովուրդ, և այնպէս է դուրս գալիս, թէ արաբաց զօրքը բաղկացած էր ասորիքի և միջագետքի տեղացի բնակիչներից. այսպէս՝ եր. 197, 7 և 2 ն. اهل الشام و الجزيرة Թարգմանած է Ասորիքի և Միջագետքի ժողովուրդ, եր. 198, 9 վ. اهل الكوفة — բաբելացի, եր. 198, 10 և 3 ն. اهل الشام — ասորիք. սակայն اهل այս բոլոր գէպքերում ոչ թէ բնիկ ժողովուրդն է, այլ այդ երկրներում բնակուող արաբները, արաբ զօրքը:

Առաջ տանենք համեմատութիւնը, և կը տեսնենք աւելի տարօրինակ շփոթութիւններ. Բելադորին պատմում է, (եր. 198, 8 ն.) որ Սալման իբն Ռաբի'ա Օսմանի խալիֆութեան օրով ուղարկուեց Հայաստան, գերեց և աւարեց և դարձաւ Վալիտ իբն Օգբայի մօտ, որը Մոոսիլի Հասիսայումն էր, 25 թուին (Հիջրէի). Թարգմանուած է. «Սալման վերագառնում է Ալվալիդ բ. Օգբայի մօտ, ըստ

աւանդութեան (!) Մոսուլի բնակիչների այս բանը տեղի ունեցաւ 25 թուին: Խալաթեան շփոթել է այստեղ միմիանց հետ حديث له خديثة. առաջինը նշանակում է լուր, պատմութիւն, աւանդութիւն, իսկ երկրորդը տեղի անուն է: Թարգմանչի ուշադրութիւնն ենք հրաւիրում նոյն Բեւլադորու պատմութեան 184 եր. 7 ն. հետեւեալ նախադասութեան վրայ.

فلما كانت سنة ١٢٩ شخص المنصور عن بغداد حتى نزل حدثه الموصل قالوا ولما اختط هزيمة الموصل

و أسكنها العرب أتى الحديثه وكانت قرية قديمة فيها بيعتان و ابيات النصارى فسميت الحديثه لانها بعد الموصل و يقال ان هزيمة نزل الحديثه أولا

Այսպէս ուրեմն Հատիսան մի աւան էր Մոսուլի մօտ, մի հին աւան, որտեղ կային երկու եկեղեցի և քրիստոնեաների տներ: Կարեւոր չեմ համարում ամբողջ հատուածը բառացի թարգմանել, յուսալով որ Խալաթեան բնագիրը կը հասկանայ և կը համոզուի, որ քաղաքի անունը թարգմանել է ըստ աւանդութեան Մոսուլի բնակիչներին:

Նման շփոթութիւններ են նաև հետեւեալները. Բեւլադորին (եր. 194, 4 վ.) ասում է, որ իրեն պատմել են երկու կարնեցիներ՝ Մահամմետ (իդէպ, ոչ Մահմետ) իրն Բիշր և իրն Վարդ. թարգմանութեան մէջ կարդում ենք... «բ. Բիշր և իրն Վարդ Քալիան»: ստիպուած ենք հայ ընթերցողին բացատրել, թէ ինչպէս երկու կարնեցիներ խօսքը դառել է Քալիան. Խալաթեան ընդունել է القاليان իբրև յատուկ անուն կամ մականուն, մինչդեռ այդ երկու կալի թիւ է القالى յարաբերականից, որ նշանակում է կարնեցի: Այսպէս նաև Արտաշատ անունը հետևում է բնագրի մէջ մի բացատրութիւն— و هي قرية القرمز. բառացի նշանակում է. սա գրմզի (որդան կարմրի) աւանն է. թարգմանութեան մէջ գրմզը հասկացուել է յատուկ անուն «Արտաշատ, որ է ալ-Քիրմիզ»: Սակայն պ. Խալաթեան իր արաբագիտութեամբ դեռ աւելի մեծ սխալորիկ է անում մեզ. ըստ բնագրի (204, 1 ն.) Մոսուլը ուղարկել էր Հաբիր իրն Մասլամային բանակով Օս-

մանին օգնութեան, երբ սա պաշարուած էր. թարգմանիչը մեզ հաւատացնում է, թէ «Մոավիան ուղարկած էր նրան Ջայջ (!) Օսմանին օգնութեան», և դեռ ծանօթութեամբ էլ փորձում է դրա տեղը, որ միմիայն թարգմանիչի գլխում գոյութիւն ունի, Մեդինայի շրջակայքում ցոյց տալու Ամբողջ գաղտնիքը նրանումն է, որ جيش բառը, որ բանակ է նշանակում, թարգմանիչն ընդունել է իբրեւ յատուկ անուն, արաբական ձեւ جيش, որ նշանակում է բանակի մէջ, բանակով, դուրս է եկել (դէպի) Ջայջ: Պ. Խալաթեանին դժուար թէ յայտնի չլինի, որ մեր նախդրիւ տրականը արաբերէնում արտայայտուած է կամ հայցական հոլովով կամ الى (և ոչ فى) նախադրութեան միջոցով:

Ինչպէս արդէն առիթ ունեցանք համոզուելու, արաբական բառերի արտաքին տեսքը ձգել է թացգմանչին մոլորութիւնների մէջ. Դուին քաղաքի բնակիչներին տուած թղթի մէջ (եր. 200, 6 ն.) Հաբիր ապահովութիւն է խոստանում ի միջի այլոյ նոցա աղօթատներին. թարգմանութեան մէջ աղօթատուն բառը դառել է առևտուր, այն հասարակ պատճառով, որ باعة (եղակին باعة = եկեղեցի,) նոյնպէս է գրւում, ինչպէս և باعة (նաև باعة) = առևտուր: Այս դէպքում սակայն չպէտք է թիւրիմացութիւն տեղի ունենար, քանի որ հրատարակիչը ձայնաւոր նշանները գրել է. նոյն սխալը կրկնւում է նաև Հաբիրի՝ Թիֆլիզի բնակիչներին տուած թղթի մէջ: Պատմելով (եր. 199, 8 վ.) Դալիգալա քաղաքի պաշարումը 133 թ. յունաց կայսեր կողմից ուղարկուած Քուսան (?) անունով հայի ձեռքով, Բելադորին աւելացնում է, թէ այդ փաղափ բնակիչներն այդ ժամանակ փչ էին. ըստ թարգմանչի Կուսան եկաւ և պաշարեց քաղաքը մի փանի օր: Դուինի բնակիչներին տուած թղթի բնագրում առուած է, «մենք պայմանի համաձայն մեր խօսքին հաւատարիմ կը մնանք, որչափ ժամանակ որ դուք հաւատարիմ մնաք և գլխահարկ ու հողահարկ վճարէք». թարգմանած է. «մենք պարտաւոր ենք մեր պարտքը ձեր վերաբերմամբ կատարել, մինչև որ

դուք ձերք մեր վերաբերմամբ կատարեալ: Եր. 202, 4 վ. Հաբիբի Թիֆլիզի քաղաքացիներին ուղղած թղթից յետոյ Բելադարի բերում է Ջեռուան. իբն Աբդալլահի նոյն քաղաքի բնակիչներին ուղղած թղթի պատճենը. բնագրի բառերն են. «Ջեռուան իբն Աբդուլլահ էլ Հաքամի գրեց Թիֆլիզի ժողովրդին մի թուղթ, որի պատճենն է»... հետևում է թուղթը. թարգմանիչը Հաբիբի թղթին անմիջապէս կցում է. «սորա պատճեն գրեց Տփլիսի բնակիչներին Ջառուան ի. Աբդալլահ ալ Հակամի», այնպէս է հասկացում, թէ Ջառուան գրել է նախընթաց, այն է Հաբիբի թղթի պատճենը. պ. Խալաթեան գոնէ ուշադրութիւն դարձնէր այս երկրորդ թղթի բովանդակութեան վրայ, որ շատ տարբեր է առաջինի բովանդակութիւնից: Ըստ բնագր. (Եր. 203, 5 վ.) Թարթաու (ի դէպ الثورثو երբէք չի կարելի Ձուրդուր տառադարձել ինչպէս թարգմանիչն է անում, և ի զուր է առաջարկում الثورثو կամ الثرتو սրբազրութիւնը, ٧ համապատասխանում է Թին, մեր քին.) գտնւում էր Բարդայից մի փառախից պալատի հեռաւորութեան վրայ. ըստ թարգմ. այդ գետը քաղաքից սակաւ մղոնով հեռու էր:— Ըստ բնագրի (Եր. 203 5 վ. հհ.) Բարդայի բնակիչները փակեցին նրա (Սալմանի) առաջ քաղաքի դռները, Սալման նեղեց (կամ պաշարեց) քաղաքը մի ժամանակ, ... ըստ թարգմ. «փակելով բնակիչներին դռների յետեր, նա մի քանի օրուայ ընթացքում գրաւեց քաղաքը». ապա մոռանալով նախընթաց տողերը՝ շարունակութիւնը թարգմանում է. «բնակիչք խաղաղութիւն կապեցին նորա հետ և բաց արին դռները»:—

Բուդայի մասին պատմիչն ասում է (Եր. 203, 4 ն.) թէ Հայաստանի, Ատրպատականի և Շիմշատի կուսակալն էր. ըստ թարգմանչի Բուդա հովանաւոր հանդիսացաւ ն. հհ. Սուլէյման բէն Աբդուլմեւլիք Հայաստանի վրայ կուսակալ է կարգում Ատիյ բէն Ատիյին... Իսկ Սուլէյմանից յետոյ նրան (Ատիյին) Հայաստանի վրայ է կարգում

Օմար բեն Աբա ուլ Ազիզ խալիֆը (Օմար II.) Ատիյի ա-
նունով է կոչուած է Բայլականի գետը نهر عدى . այս հա-
տուածը թարգմանուած է. «Մուլէյման ի. Աբդալլահ (?)
կառավարեցրեց Հայաստանի վրայ Ազի ի. Ատի. . . . ապա
նա նշանակեց Օմար բեն Աբաուլ Ազիզին, փայտակարանի
نهر عدى ի տիրոջը»։ Եթէ թարգմանութիւնը միայն ունե-
նանք մեր առաջ իբրեւ աղբիւր, ստիպուած պիտի լինենք
ընդունելու, որ Օմար իբն Աբդուլազիզ խալիֆը Հայաս-
տանի վրայ կուսակալ է նշանակուած եկել, (!?) և նորա
անունով ստացել է Բայլականի գետը نهر عدى անունը.
Մուլէյմանի և Օմար II ի օրով Հայաստանի կուսակալ
եղել է Ատիյ բ Ատիյ. (այս մասին տես իմ հետազոտու-
թիւնը. Zeitschr. für arm. philologie, 1903. Heft III, S. 179.)

Բաւական գուարճալի են նաև թարգմանչի ծանո-
թութիւնները, բայց այդ մասին հետեւեալ անգամ. մեր
նկատողութիւնները հակառակ մեր կամքին շատ երկա-
րացան։

Նառուցակելի

Մ. Ղ.



Քրիստոնէութեան Արշալուսին կամ պատկերներ Ներոնի ժամա-
նակից. Գ. Վ. Ֆարրարի. Ռուսերէնից թարգմանեց Մխիթար
վարդապետ. 1903. Վաղարշապատ, էջ՝ 711, գին 2 ր. 50 կ.։

«Այս գիրքը ոչ նորավէպ է և ոչ վէպ, ասուծ է հեղինակն
իր յառաջաբանում, ուստի և այդ տեսակէտից քննադատել չի
կարելի»։ Ֆարրարն, որի անունը միայն բաւական է ցոյց տալու
թէ ի՞նչքան լուրջ գրուածքի հետ դործ ունինք, իր սոյն երկով
կամեցել է ցոյց տալ, թէ ի՞նչպէս քրիստոնէութիւնը, որ ըստ
մարդկային հայեցողութեան իւր ծագումով այնչափ ստոր էր և
աշխարհային միջոցներով այնչափ թույլ, կարողացաւ զարմանալի-